ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

29 օգոստոսի 2017թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի բոլոր 15 անդամները:

1. Ալեքսան Շամիլի Մարգարյան –դեկան,ֆ.մ.գ.թ, խորհրդի նախագահ
2. Քրիստինե Համլետի Մխիթարյան- քարտուղար,ասիստենտ, ՀՀ դիզայներների միության անդամ,
3. Համլետ Միհրդատի Ասատրյան –դոցենտ, ՀՀ նկարիչների միության անդամ, ֆակուլտետի գեղարվեստական խորհրդի նախագահ, ,,Գծանկարի,գունանկարի և քանդակի” ամբիոնի վարիչի ժ/պ
4. Լիլիթ Ռոբերտի Ղալումյան – Իջևանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ
5. Համլետ Խաչատուրի Մխիթարյան - Իջևան քաղաքի արվեստի դպրոցի տնօրեն
6. Մարտին Վարդանի Հարությունյան –ասիստենտ,արվ.գ.թ., ,,Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի’’ ամբիոնի վարիչի ժ/պ
7. Անուշ Լյուբիկի Չիբուխչյան- ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ,
8. Լիլիթ Հենրիկի Ֆլջյան – դոցենտ, մ.գ.թ., << Դիզայն>> մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար
9. Սերգեյ Թորգոմի Հովհաննիսյան - ասիստենտ,ՀՀ նկարիչների միության անդամ,ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
10. Մելքումյան Միսակ Ստյոպայի-Տավուշի մարզի գլխավոր ճարտարապետ
11. Բագամյան Տիգրան Վարդանի-ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ
12. Էդգար Գրիգորի Օթարյան -երրորդ կուրսի ուսանող,ՖՈՒԽ նախագահ
13. Կարեն Գարեգինի Գոգինյան-չորրորդ կուրսի ուսանող,ՈՒԳԸ նախագահ
14. Դիանա Արտակի Դավթյան –չորրորդ կուրսի ավագ
15. Ծովինար Մուշեղի Կարապետյան – երկրորդ կուրսի ավագ

Օրակարգ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի և 2018-2019 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2018-19թթ. ուս. տարվա I կիսամյակի դասացուցակների քննարկում:/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
3. 2018-2019թթ.ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի և նախորդ կիսամյակի լուծարքային շրջանի կազմակեպման նախապատրաստական աշխատանքների քննարկում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /
4. Ընթացիկ հարցեր :

<u>ԼՍԵՑԻՆ -</u> Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա սկզբից ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նորացված կազմը,որն ընդգրկում է ֆակուլտետի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական առաջատար կազմին, արտաքին շահակիցների ներկայացուցիչներին, ուսանողական կառույցների ղեկավարներին և որոշ կուրսերի ավագներին: Այնուհետև ներկայացվեց ֆակուլտետի խորհրդի 2018-19թթ. ուստարվա աշխատանքային պլանը և նշվեց, որ վերջինս բխում է մասնաճյուղի 2016-2020թթ. ռազմավարական և ֆակուլտետի զարգացման պլաններից, որն ընդգրկում է բակալավրի ուսումնական պրոցեսների բոլոր գործընթացները:

Քննարկումից հետո եղավ ընդհանուր առաջարկ հավանություն տալ խորհրդի 2018-19թթ. ուստարվա աշխատանքային պլանը/ կցվում է արձանագրությանը/:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2018-19թթ. ուստարվա ֆակուլտետի գիտական խորհրդի նորացված կազմը և աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյան: Նա ներկայացրեց 2018-198թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և կրթական ծրագրերի: Դասացուցակը կազմվել է ,,Դիզայն'' մասնագիտության I, II, III և IV կուրսերի և ,,Կիրառական արվեստ,, մասնագիտության IV կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական բեռնվածության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին գիտական խորհրդի անդամները առաջարկեցին ներկայացնել տնօրենություն:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2018-19թթ.ուստարվա I կիսամյակի դասացուցակը ներկայացնել տնօրենության քննարկմանն ու հաստատմանը:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային հարցերի վերաբերյալ հանձնարարականներով: Զեկուցողը ներկայացրեց օգոստոսի քսանչորսից իրականացված աշխատանքները, որոնք անհրաժեշտ էին ուսումնական տարին սկսելու համար: Արվեստանոցների համար ձեռք են բերվել բավարար քանակությամբ ուսումնական նյութեր/ քանդակի կավ, թրծակավ, գիպս, թելեր, վիտրաժի ներկեր և այլն/, հաշվի առնելով յուրաքանչյուր կուրսում ուսանողների թիվը և դասավանդվող առարկաների թեմաների բովանդակությունները: Մասնավորապես նշվեց, որ երկու ուսանողներ վերադարձել են ՀՀ ազգային բանակից և ունեն ակադեմիական պարտքեր և առարկայական տարբերություններ:Այնուհետև Ա.Մարգարյանը ներկայացրեց առաջին լուծարքային շրջանի և վերոնշյալ ուսանողների անհատական գրաֆիկները և հանձնարարեց ամբիոնի վարիչներին առանձնահատուկ ուշադրության դարձնել պարտքերի վերահանձնման գործընթացներին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Գործընթացի իրականանացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և կրթական ծրագրերի ղեկավարի վրա:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Մարգարյանը և նշեց, որ առաջին կուրս են ընդունվել թվով 11 ուսանողներ:Կուրսղեկ նշանակվել է նկ.միութ.անդամ, ասիստենտ Դ.Չիբուխչյանը,ով հատկապես սկզբնական շրջանում, շատ անելիքներ ունի տեղեկատվական բնույթի, քանզի ԲՈՒՀ-երը և ԵՊՀ ԻՄ-ն ունեն առանձնահատկություններ՝ կապված ուսումնական գործընթացները կազմակերպելու, քննությունների և ստուգարքների անցկացման կանոնների և շատ այլ հարցերի հետ:

Ընթացիկ հարցերից էր նաև ֆակուլտետի կողմից մասնաճյուղի գիտական խորհրդի անդամի թեկնածուի առաջադրման հարցը: Ա.Մարգարյանը դիմեց ֆակուլտետի խորհրդի անդամներին ,որպեսզի առաջադրեն թեկնածուներ, որոնք միաձայն առաջարկեցին ՀՀ նկարիչների միության վարչության անդամ, դոցենտ Հ.Ասատրյանի թեկնածությունը: Ձեկուցողը առաջարկությունը դրեց քվեարկության և 14կողմ ձայնով Հ.Ասատրյանը առաջադրվեց ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի անդամ:

Ընթացիկ հարցերից կարևորվեց կարգապահությանը վերաբերվող խնդիրներ , որոնք ենթակա են կատարման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դ.Չիբուխչյանը նշեց, որ մասնաճյուղի բոլոր կուրսղեկներին տրվել են հրահանգեր, աշխատանքները իրականացնելու համար կազմվել են պլան – ժամանակացույց, որտեղ հատուկ մատնանշված են բոլոր գործողությունները, ժամկետները, անհրաժեշտ ռեսուրսները և պատասխանատուները:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.Առաջին կուրս ընդունված ուսանողների հետ տանել բացատրական աշխատանքներ,հարկ եղած դեպքում աջակցել կուրսղեկին՝ վերոնշյալ խնդիրները իրականացնելիս:

2.Հ.Ասատրյանին ներկայացնել ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդի անդամ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.ՄԽԻԹԱՐՅԱՆ